



ՅՆՕՐԷՆ ԽՄՐԱԳԻՐ
 ԵՒ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
 Նիկ. Մ. ԹԻԻՎՊԵՆՏՆԱՆ
 ԽՄՐԱԳՐԱՏՈՒՆ
 Պատճառով Բերլինից Բազմա-
 կրթի խառնի դեմը Սամար փո-
 ղոց Թիւ 12

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն

ՅՈՒՆԻՍ 20 ԹՐ. ՄԷԹԱԼԻՔԻՆ

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ուկրաին	
Կ. Պոլսոյ համար	
Տարեկան	դր. 100
Վեցամսեայ	50
Եռամսեայ	25
Գուալուպ համար	
Տարեկան	դր. 150
Վեցամսեայ	75
Եռամսեայ	40
Օտար երկիր տրկն.	40 ճր.բ.

Ա. Չ. Գ.
 Երեկ հարկեցուցիչ պատ-
 ճառաւ մը թերթերնու հրա-
 տարակուծիւնը ետ մնաց:

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Հայաստան բառին տեղի պայտանական գրութեանց մէջ Պիւրտիստան բառը գործածուելուն դէմ մեր Ս. Պատրիարքին բողոքելուն վրայ, նեղա-ցած կերտին տաճկ. թերթերն, քսերով թէ մեծամասնութիւն կազմող ժողովրդեան մը բնական մտղը՝ եթէ այդ ժողովրդին անուամբը կոչել պէտք ըլլայ, վտղն ալ Պալատ՝ Հրէաստան, Սէլամըզ Չինկեանստան և Թաթաւլա՝ Յունաստան կոչել պիտի ուզեն տեղացիք, որ ծիծաղելի բան կըլլայ, և թէ Հայոց ազգին այժմու բրած բողոքն և Հայաստան անունին գործածութեան պահանջումը՝ կրնան պատճառ ըլլալ որ օսմ. ազգը անվստահ աչօք նայի հայոց (Ազգի վրայ):

Այս գիտողութիւնն ընողը՝ տճկ. թերթերն ըլլալուն համար չեմք նեղանար, զի կարևորութիւն ալ չեմք տար, ինչպէս յայտնի է Հայաստան բառին գործածութիւնը ծիծաղելի ցոյց տալու համար՝ յառաջ բերած Պալատի և Սէլամըզի օրինակներէն, որով զիրենք միայն ծիծաղելի կընեն, իսկ այն վերջին սպառնալիքը, թէ տաճկներն Հայոց վրայ անվստահ աչօք պիտի նային, ասի բողոքովին ծիծաղելի է, զի նախ պէտք էր ցոյց տալ թէ տաճկի ազգը Հայոց վրայ մինչև ցարդ վստահ աչօք նայեր և ինչ է ըրեր, հայոց վրայ գործուած բանութեանց, հարստահարութեանց, անիրաւութեանց, կեղծքմանց, առեւանգութեանց, սրբապղծութեանց և սպանութեանց աչօք գոցելէն զատ, Հայոց՝ տաճկաց հաւասարադարային իրաւունք մը չվայելելուն հակառակիւնէն զատ, Հայոց վկայութիւնը չը բռնելէն զատ, և հայը միշտ դերի, նուաճեալ և ստրուկ ժո-

ղովուրդ մը նկատել ուզելնէն զատ:

Ասոնք չեն միթէ Հայոց վրայ տաճկաց վստահութեան աչօք նայելուն արդիւնքները, և ինչ պիտի ընէին ասկէ ուրիշ եթէ անվստահ աչօք նայէին՝ Մենէ պահանջել որ Հայաստան անունով ետ կենանք անուանել մեր ժառանգական երկիրը, հաւասար է պահանջել մենէ որ ազգութիւննիս ալ դադրինք հայ անուանել, հաւասար է պահանջելու մենէ՝ որ մեր ազգութեանն ալ լեզուէն ալ հրաժարինք, և ստուգիւ այդ է ուզուածը, որպէս զի Թուրքիոյ այլևայլ ցեղերն ի մի ձուլելով, նոր օսմանցի ազգ մը կազմեն, որպէս զի Իւրաքանչիւր ազգաց ինքնուրոյն պահանջմանց տեղի չմնայ:

Ասի բուն երիտասարդ-Տաճկաստանի կուսակցութեան տըգէտ և ազգամու հետեւողաց քաղաքականութիւնն է, որ կը պահանջէր ընել ամեն ինչ իսլամին ձեռքը միայն իսլամին համար, և որոյ արդիւնքն էր օսմ. Սահմանադրութիւնը, զոր տեսանք թէ քանի մ'ամսուան մէջ ինչ բարի ձեւեր բերաւ Թուրքիոյ գլխուն, Մեք և ամեն աշխարհ հասկցած է այլ ևս թէ տճկ. թերթերուն խեղճ բազրոց խելքովն ու գաղափարովն տագործեալ մարդոց ձեռքը օգուտ մ'ալ պիտի չկրնան տեսնել հպատակ ազգերն, որոց Իւրաքանչիւրին իրեն յատուկ ազգային պահանջումներն խղիւղ ուզելու ժամանակը չատոնց անցած է, և դեռ կ'կարծեն թէ՛ կրնան զանոնք ատկէ ետ կեցնել, մինչ այդ ազգայնութեան զգացումներն արժատացած և զօրացած են:

Չեն մտածեր թէ որ ազգը որ ազգին հետ ի մի պիտի ձուլեն, և կարելի է միթէ բնաւ-

րութեամբ, յատկութեամբ, մտաւոր կարողութեամբ, գործունէութեամբ և ուրիշ անոնք հանգամանօք իրարմէ անհունապէս տարբեր այլասեռ ժողովուրդներն իրարու հետ ի մի ձուլել: Այս բանին հաւատարու համար մարդ տաճկ. թերթի մը խմբագիրն ըլլալու է, և ահայս կարգի անձանց այն ցնորական գաղափարն է, որ պատճառ տուաւ Թուրքիոյ քրիստոնէայ ժողովրդոց, որ Իւրաքանչիւրն իր գլխուն ճարն ինքն իր ձեռքը որոնէ, ինչօր կ'նեղանան ասոր:

ԱՆԳՂԻՈՅ
ՀՈՐՏԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ
 Նիստ 15/27 Յունիս

ՀԱՅՈՑ ԽՆԳԻՐ
 Թուրքիոյ Հայոց կացութիւնը.— Պերլինի Գաշնագրին Յարգողութեան հրատարակութիւնը

Լորտ ԳԱՐՆԱՐՎՈՆ, որ առաջուրնէ արձանագրել տուած էր թէ Պերլինի գաշնագրին Յարգողութեան հետ բաղադրամամբ Հայ ժողովրդեան ներկայ վիճակին վրայ ժողովին ուշադրութիւնը պիտի հրաւիրէր և այս նիւթիս վրայ եղած թղթակցութիւնները պիտի խնդրէր, խօսքի սկսաւ դիտելով թէ գրեթէ 12 ամիս էր որ վիճաբանութիւն մը տեղի ունեցած էր Լորտերու ժողովին մէջ Լորտ Շաֆթըսպրի մէջ հարցման վերայ, որուն անունն ամեն մարդասիրական խնդրոց հետ ընկերակցած է, հարցում մը՝ որ մեծ ուշադրութիւն գրաւեց, և մեծ համակրութիւն տրվեց, Հայք Արեւելեան ժողովրդոց մէջ խելքի կողմանէ բարձր դիրք մը կ'ընեն և աշխարհագրութեան և ուրիշ ուսմանց ու նիւթոց մէջ մեծ հըմ-

տութիւն ունին: Այս առթիւ ազնիւ մարդիկն (Լորտ Սալիզպըրի) Հայոց վրայ իւր համակրութիւնն յայտնելով յայտարարեց թէ կ'փափաքէր օգնել անոնց, Լորտ Գարնարվոն կը փափաքէր ժողովին ուշադրութիւնը հրաւիրել այս մասնաւոր կեանք վրայ թէ Այսթէֆանօսի դաշնագրութեան Յարգողութեան օգուտով պայմանագրեալ էր որ Բ. Դուռն ինչ որ կրնար պիտի ընէր Հայ ժողովրդեան վիճակին բարւոքման համար, և ճիշտ այդ կեանք նկատմամբ Լորտ Սալիզպըրի խոստացած էր՝ այդ բարւոքումը ձեռք բերելու համար կրցածն ընել, Յաջորդ ձեռնարկն եղաւ Պերլինի վեհաժողովն, և միևնոյն համակրութիւնն յայտնուեցաւ, որուն արդիւնքն եղաւ Պերլինի գաշնագրութեան Յարգողութեան օգուտով Բ. Դուռն խոստացաւ անոնց այլևս յապաղման ի գործ դնել Հայաստանի մէջ տեղական պիտոյից պահանջած բարւոքումներն ու բարենորոգումներն և Հայոց ապահովութիւնը երաշխաւորել, Այսթէֆանօսի և Պերլինի գաշնագրութեանց տրամագրութիւններուն մէջ մեծ տարբերութիւն կար, որովհետև ան առաջնոյն մէջ բարւոքմանը բուն Հայաստանի սահմանեալ էին, բայց Պերլինի գաշնագրութեամբ՝ երաշխաւորութիւն ընդհանուր կերպիւ Փոքր-Ասիոյ հայ ժողովրդեան վրայ տարածուած է, և մեք խոստացանք որ եթէ Ռուսիա Փոքր-Ասիոյ կողմէն Թուրքիոյ վրայ յարձակում ընէ, Թուրքիան պաշտպանեմք, և այս նկատողութեամբ Թուրքիա ալ խօսք տուաւ Արեւելից մէջ քրիստոնէայ ժողովրդոց պահանջած բարենորոգումներն գործադրել:

Լորտ Գարնարվոն կուզէ այս ժամ գիտնալ թէ այդ խոստումն

ներն ինչպէս գործողութեան,
և այս մասին երեք կետ պիտի
քննէ որք են ոստիկանութեան,
դատարանաց և տրոց բարենու
րողմունքը :

Ոստիկանութեան վրայ խո-
սելով, ի գործ դրուած հարջու-
տահարութիւններն անկարելի
է նկարագրել, կամահաճու-
թեամբ մարդիկ բանտ կ'ըրկը-
ուին, ոստիկանութեան հաճո-
յից համեմատ բռնաբարձ ա-
նասունք կ'ըրաւին, և բռնի
զօրք կ'ըրկուի բանակը, միով
բանիւ թուրք ոստիկանութեան
ի գործ դրած ամբողջ կառա-
վարութիւնը բռնութեան և հա-
րբտահարութեան կառավարու-
թիւն մ'է: Դատարանաց դա-
րով, դատաւորաց կեղեքմունքը
նողկալի են, սուտ վկայութիւնն
առատ և սուտ երդումն ալ
սովորական բան մ'է դարձած,
Հանրաձայնութիւն հաշիւ մ'է որքս-
պիտակ մօրուք և պատկառելի
դէմք ունեցող ծերունիներուն
վկայութիւնն ստանալու համար
աւելի դրամ պէտք է վճարել՝
քան թէ երիտասարդաց վկա-
յութեան համար :

Լորտ ֆարնարվոն կ'ինդրէ
ժողովէն բաղդատու թուրքիոյ
և Ռուսիոյ կառավարութեանց
ներքե գտնուող Հայոց վիճակն
և ըսել թէ անգղ. կառավարու-
թիւնը անհնար գործի մը ձեռք
զարկած չէ: Լորտ ֆարնարվոն
կ'խոստովանի թէ ազիւ մար-
քիզն (Լորտ Սալիգարի) Հայաս-
տանի մէջ դատական ատեան-
ներուն կեղեքմանց վրայ թուրք
կառավարութեան ուշադրու-
թիւնն հրաւիրած էր: Անցեալ
տարի օգոստոս Յին ազնիւ մար-
քիզը ծանուցագիր մը գրեց,
որոյ մէջ այս նիւթոյն վրայ Դը-
րան ուշադրութիւնը կ'հրատի-
րէր, և Դուռն ալ գեղեցիկ
խոստումներ տուաւ, բայց երբ
կարգը մանրամասնութեանց ե-
կաւ, սա արդիւնքը տեսնուե-
ցաւ որ Դուռը բաւական փա-
փաքող էր լաւ ոստիկանութիւն
մ'ունենալու, բայց այդ ոստի-
կանութեան վճարելու գրամ
չունէր: Իսկ դատարանաց նը-
կատմամբ Դուռն իւր իշխանու-
թեան մէջ միջամտութիւն չէր
կրնար ընդունիլ, և դժկամա-
կութեամբ հաւանեցաւ քննիչ
տեսուչ մ'անուանելու, բայց
ինք (Լորտ ֆարնարվոն) շատ կը
կասկածէր թէ օղբուտ չպիտի
ունենար. իսկ տրոց վերաբեր-
եալ բարենորոգումները Դուռը
տակաւ առ տակաւ միայն ի
գործ կրնար դնել, որ ըսել էր
թէ այդ բարենորոգումնք մին.
չ'է Մաազատիկն յետաձգուած
էին :

Հայոց կրած հարստահարու-
թութեանց խնդրոյն դատնալով

Լորտ ֆարնարվոն անցեալ տար-
ւոյն նոյեմբեր ամսէն մինչև
յառաջիկայ տարւոյս յունվարի
վերջն Հայաստանի մէջ գործը-
ուած բռնութեանց ու հարջու-
տահարութեանց ցուցակ մը յի-
շեց, յորում բոլորած է թէ Մը-
չոյ կողմերը ժողովրդեան վի-
ճակէն աւելի գէշ էր, թէ
Քիւրտք կ'կողոպտէին ժողո-
վուրդը, Հայոց դիւղերը քան-
դուած էին, և գիւղ մը չորս
անգամ աւարտութեան մատ-
նուած էր: Ահմէտ բաշա անուն
անձ մը Պիթիսի գաւառին մէջ
երեսուն հատ մարդասպան
Քիւրդ ձերբակալած լինելով,
պաշտօնակեղեր և Քիւրտքա-
ղատ թողուեր էին: Տուրքերը
մեծ խոտութեամբ կ'հաւաքու-
ուին: Չէյթունի գաւառին մէջ
տուրքերն, որ առաջ 25.000 դը-
էին, 500.000 դըլի բարձրացած
են, Բագմաթիւ Հայեր՝ չկրնա-
լով այս ծանր տուրքերը վճա-
րել, բանտարկուեր են, բայց
ի մեծ պատիւ Պ. Մալթի մեր
ներկայիսին՝ թող արուեր են:
Դուռը թղթադրամ հանեց բայց
տրոց փոխարէն չընդունիր Տա-
սանուրդի տրոց համար Հայոց
Պատրիարքին մատուցած խնդ-
րոց և առաջարկութեանց և ոչ
մին նկատողութեան առաւ: Դը-
րան ընել կրցած միակ զիջումը
զեղմանց ենթակայ եղող գա-
ւառներն յանձնախումբ մը զըր-
կել էր, բայց այդ յանձնախում-
բին մէջ քրիստոնեայ անգամ
գտնուելու հաւանութիւն չէր
տար, որով Պատրիարքն ու չըն-
դունեց այդ պիտի յանձնախումբ
մը: Վերջին օրերս ամեն կողմ
յանձնախումբներ (Քոմիտէիներ)
զրկուեցան, բայց ասոնք պար-
զապէս նորանոր կեղեքմանց և
հարստահարութեանց զիմակ-
ներ են, և այս վայրկիսիս բազ-
մաթիւ անձինք տակալին բան-
տերը կ'հսկեն, որովհետև չեն
կրնար կառավարութեան պա-
հանջումները կատարել:

Պատրիարքը բողոք մ'ըրած
է, որ Լորտ ֆարնարվոն կ'կար-
ծէ թէ դաշնագրութիւնն ստա-
րագրող բոլոր տէրութեանց
զրկուած է, և իւր խնդրած
թղթերէն մին ալ այն է: Հայք
հաւասարութիւն կ'ինդրեն ա-
ռաջի օրինաց, հաւասարութիւն
տրոց մտին, և ի վեր քան դա-
մենայն՝ քրիստոնեայ կառավա-
րիչներ, և յորտ ֆարնարվոն կը
կարծէ թէ մինչև որ Հայք գա-
սոնք չունենան՝ հարստահարու-
թեան չպիտի ազատին:

Լորտ ֆարնարվոն յիշեցոյց
ժողովին թէ խորմի պատերազ-
մէն յետոյ լրտա Բարէնտոն
քանիցս յայտարարեց Ռ. Դրան
որ եթէ կառավարչաց հարջու-

տահարութիւնը շարունակի, այլ
ևս անհնար պիտի լինի թուր-
քիոյ քրիստոնեայ ժողովրդեան
վրայ մահաճեական կառավա-
րութիւնը պաշտպանել—(մտիկ
ըրէ՛ք, մտիկ ըրէ՛ք)—և 4 տարի
ետքը լրտա ճօն Ռուսէլ շատ
գրեց այս նիւթիս վրայ և ազ-
դուակէս յանդիմանութիւններ
ըրաւ Ռ. Դրան: Լորտ ֆարնար-
վոն այս նիւթը Լորտերուն ժո-
ղովին առջև կ'հանէ, որովհետև
1872էն ի վեր Դրան անհոգու-
թեանը վրայ տեղեկութիւնք
շարունակած էին, և դեռ բա-
րենորոգում մը չէր եղած: Լորտ
ֆարնարվոն իրաց այս վիճակը
շատ դժբաղդ և վտանգալից կը
նկատէ և կըսէ թէ այդ վիճա-
կը կրնայ անցեալ տարի խողա-
զացեալ կարծուած Արևելեան
խնդիրը վերստին զարթուցանել
կցաւ որ Անգղիոյ զէմ՝ դըժ-
գոհութիւն կայ թէ՛ քրիստոնե-
այ և թէ՛ մահաճեական ժողո-
վըրդոցը կողմանէ: Քրիստոնէից
կողմանէ, որովհետև մեր խոստ-
մանց գործադրութիւնը չեն
տեսներ, եւ մահաճեականաց
կողմանէ՝ մեր շարունակեալ թէ
և ազարդին՝ միջամտութեան
համար Հանգուցեալ լորտ Ա-
պէրաին ըսած էր թէ միայն
անդիմադրելի ճշման միջոցաւ
թուրք կառավարութիւնը բա-
րենորոգմանց պիտի ձեռնադ-
կէր: Լորտ ֆարնարվոն վերջա-
ցոյց՝ խնդրելով որ այս խնդ-
րոյս վերաբերեալ թղթակցու-
թիւնք ժողովին հաղորդուին
Շարունակել

Բազմէն հետեւեալ զիրք
Պատրիարքարան զրկուած բլլա-
լով մէկ օրինակն ալ մեզ յանձ-
նուած է ի հրատարակութիւն,
և մինապատիւ Ս. Պատրի-
արք բարձրաշնորհ Հայր,
79 փետր. 21 թուով առ-
Ռարձր Արքայութիւնը զրկը-
ուած (և պատճէր մայիս 18ին
մեր տեղապահ Արժ. Տ. Եղիշէ
վարդապետին ժամանած) հան-
րագիր մը, որպէս թէ մեր ըս-
տորագրութիւնը կ'ըրէ, և որ
ծանր և անտանելի ամբաստա-
նութեամբ լի գրուած մն է Տե-
ղապահ Ս. Հօր զէմ: Մեր Արժ.
Տեղապահը կրօնապահ է, և
քաղաքիս մէջ բրած եռամեայ
քորոզութեան պաշտօնը ամե-
նայն հաւատարմութեամբ վա-
րեց, ոչ ոք կրցած է սորա վա-
րոց և բարոյց նկատմամբ ան-
պարկեշտութիւն մը նշմարել, և
ոչ ալ Հայաստանեայց եկեղեց-
ւոյ օղջամիտ վարդապետու-
թեան հակառակ շարժում մը
նկատել այլ կրօնասէր, ազգա-
սէր և միանգամայն անձնուէր
հովիւ մ'ըլլալը կ'վկայեմք թէ
մեք և թէ՛ համայն քաղաքիս
ողջխան ազգային, նորին քա-

րողութեամբ քաղաքիս բողո-
քականութիւնը հետազնտէ նը-
ուածելով, այժմ բոլորովին հո-
գեւարքի մէջ կ'գտնուի և ազ-
գայնոցս համահաճութեամբ Ա.
աւջն. տեղապահ լնտրուած է
օրինօք, միայն թէ քաղաքիս
մէջ երեք պատկառութիւն կան
տարուած է, որոց համար հար-
ցուած է ի մէջ թէ բոտ Հաս-
յաստանեայց ուղղափառ եկե-
ղեցւոյ ճիւղահամարութեան
սոցա մէջ չհաստատուին կայ թէ
չկայ, մեք ալ չհաս են ըսելով
ստորագրած ենք:

Մնացեալ գրուածներն բա-
րորովին զրպարտութիւն ըլլալով
և մեր ստորագրութիւնք խոր-
գախտութեամբ գրուած ըլլալն
վկայելով կատարադրեմք:

Մնամք և լն.
(Կրօն. ժողովոյ 7 եկեղե-
անդամոց ստորագրու-
թիւնք և կնիք)
22 մայիս 1879 Ռադէշ

Անգղ. խորհրդարանի ան-
գամ Պատրիարքարանը, որ ի
նպաստ հայկական խնդրոյն ա-
տենախօսութիւններ ըրած է,
այս կիրակի օր Պէյրօզ Ս. Պատ-
րիարքին այցելութիւն մը տա-
լով, ուր ներկայ գտնուեր է նա
և Ստեփան բաշա, փափաք
յայտնելու Լորտը որ անգամ
մ'ալ մեր ազգ. երեսփոխանաց
ժողովոյ ներկայ և ունկնդիր
գտնուի:

Կ'հաւաստեն թէ Մարգիդին
տոյն փափաքը մեծ հաճու-
թեամբ ընդունուելով հետեւա-
բար ինքն ալ յառաջիկայ ուր-
բաթ աւուր դաճակ նիստին
ներկայ պիտի գտնուի եղեր:

Կ'հաւաստեն թէ կարնոյ մէջ
բարենորոգմանց ընդհ. ժողովը
դեռ չէ կազմուեր, կայս. ֆո-
միտերներուն մէջ կարծեաց ան-
համաձայնութիւն մը ծագելով
թէ Քիւրտերն ու վրանաբնակ
ցեղերն ալ այդ ընդհ. ժողովոյ
պիտի կարենան մասնակցել թէ
անոնք տուրք և զօրք չտալուն
համար՝ այժմ այս ժողովին ալ
չպիտի կարենան մի մասնակցել
Քոմիտէք այս մասին հրահանգ-
խնդրեր են Ռ. Դրանն:

Մարաշէն ալ կ'ըրեն թէ՞
Անգղիոյ կառավարութիւնէն ֆո-
քը-Ալիա հիւպատոս զրկուող
Պ. Չէրմայտ հարիւրապետը՝
Ռիթիոյ վիճակին և կայս. ֆո-
միտերներուն արարմանը վրա-
յօք իր անգեղակալիքը չլինելով
Սըր Լէյրտին զրկել, և Ռու-
նիոյ և շրջակայից երկրացոյց
քարտէսն ալ հաներ է, Պ. Չէրմ.
սայտ ցաւ յայտնելով Քոմիտէք
ներուն, թէ գործ մը չտեսան,
ասոնք հեռաղ իրենց ցոյց առելը

են թէ Բ. Գուռն իրենց տուած արտօնութիւնը ետ առեր է, հրամայելով որ Զէյթունի գործոց քննութեան տեղեկագիրը Պօլիս չղկած և Պօլսէն նոր հրաման չտացած՝ բնաւ բարւոքմանց գործադրութեան չքսուի:

Մինակ զօրանոցը շինել սկըսեր, առհիկ մը Ուլիայ գամա գամ դրեր, կէս քրիստ, և կէս սոճի, գաւառական ժողով մը կազմեր են:

Քովսէրք Մարաշի մէջ ալ մեծ գործ մը չեն տեսած, որ Զէյթունցի բանտօրկեաներէն 40-50ի չափ արձակեր են, բայց դեռ 100ի չափ մնացեր են բանտը, ներողութեան սպասելով: Պապիկ անուն Զէյթունցին ալ քանի մը հարիւր մարդոց հետ լեռները քաշուեր: Սուլթանին ներողութեանը կապակէ եղեր:

Վարնայէն ալ կ'զրեն թէ Պուլիարիոյ կառավարիչ Տօնտուքօֆ ֆօրսաքօֆ զօրապետը յիս. 20ին վարնա գալով, Պաթէմպէրկի իշխանը դիմաւորելու համար, տեղւոյն Առաջնորդ Ս. Հայրը նոյն քաղքին ազգ. երեւելիներէն Մովսէս Յակօբէֆի և Հ. Սարգսեան Մուրատէֆի ընկերակցութեամբ նոյն օրը ֆօրսաքօֆ իշխանին այցելութիւն մը տուեր են և Հա. յաստանի ցաւալի կացութեանը վրայ խօսք բացուելով, Պաթէմպէրկի իշխանին ալ ինչ կերպով ընդունուելուն վրայօք խօսուելէն յետոյ բաժնուեր են:

ՀՆՈՍԱԳՐԱՒՈՒՐՔ

Գահիրէ 5 յիս.

Խտիվ Թէվֆիք բաշայի մէկ հրովարտակը կարգելու պաշտօնէից նախկին գահիրէց Նուպար բաշայի՝ եզրիտական երկիրը մտնելու:

Ս. Աթէթէրսպուրկ 5 յիս.

Խոսովայից ցոյցեր ելան թաւաչինի գիւղացոց մէջ, այն լըոյն վրայ թէ մօտ օրէն զօրքեր պիտի գան երկիրներու բաշխման և կանսին գործադրութեանը վրայ հսկելու համար:

Հոսովմ 4 յիս.

Պաշտօնէութիւնը հրաժարական տուած բլլալով թագաւորը դեռ չպատասխանեց Պ. Տէրրէթիսի, այլ խորհրդարանի նախագահը Պ. Յարիսին երէկ երեկոյ առ ինքն կոչեց:

Լոնտրա 5 յիս.

Պ Յրէտէրիք Ռիչարտ ճէյմս ֆալկլէրթ՝ Էտրէէ տեղը հիւպատոս անուանեցաւ, որն որ 1876ին Ֆիլիպէի փոխ-հիւպատոս էր:

Լոնտրա 5.—Հորկց. Խոր.

հերդարանին մէջ Սըր Տիլք ծանոյց թէ՝ յիս. 22ին պիտի առաջարկէ Ուղերձ մը յիւ թագաւորին, թուրքիոյ մէջ բարւոքումներն չուսով ի գործ դըրուելու, և Պերիինի գաշնագրին համեմատ՝ Յունաստանի սահմանազուխներն շտկուելու համար:

Վիեննա 5.—Նոր բնարու.

թեանց մէջ, մինչև գորգ ծանօթ եղած արդիւնքէն Արաւրիայի ազատականք 133 երեսի պիտու կորուսած են:

Թակլալի կըսէ թէ, Տօնտուքօֆ ֆօրսաքօֆ իշխանը յայտներ է որ Պուլիարիոյ մինչև օգոստ. 3ամսով պարպուին անկարելի է:

Գահիրէ 6.—Խորիվը մերժեց Նուպար բաշայի յեզրիպատոս դառնալու թողտուութիւնը բնել: —Եզրիպ. բանակը 12 000 հոգի իջուցուեցաւ:

Չայլլհրթիվ 5.—Հասնական կ'կարծուի թէ կ'ընէ նախկին կարուհիին վանք մը պիտի քաշուի:

Հոսովմ 4.—Սուտ է թէ Եզրիպտ. ինգլոյն առթիւ Պ. Տէրրէթիսի և թագաւորին միջև զժամութիւն մը ծագած լլլալ:

Բարիկ 6.—Գաղղիոյ հնձոց անբաւականութեանը պատճառաւ կ'կարծուի թէ այս տարի դրօշն 500 միլիոն հեթօլիտը արմալք պիտի մտնէ Գաղղիոյ:

Աթէթէր 7.—Յունաստանի Արաք. գործոց պաշտօնեայն հեռագիր մը հրատարակել տուաւ սրով հերքական կառավարութիւնը յանձն չաւներ սեէ զի շուտ ընել թուրք-հերքական սահմանազրկուց մասին ֆօնկէրցոյց տուած սահմանագծէն:

Լոնտրա 7.—Հարաւային Ալի. բիկէի անդը բանակը Զուլուզատանի մէջ զէպ յառաջ իր շարժումն սկսաւ և կ'չարունակէ: Սակայն թշնամութիւնը գաղթած են մինչև որ անգղ. բանակապետէն Զուլուներուն թագաւորին ուղղուած ինչ ինչ հարցմանց պատասխանն հասնելու:

Այս առումը հասած Ս. Աթէթէրսպուրկ 7.—Խօքանտէն կ'մանուցանեն թէ Չիւնայիք ֆաշայիք գրաւելով շատ մարդ կուտրեր են Մահմետական ժողովուրդը երկրէն կը փախչի:

Ս. Աթէթէրսպուրկ 7.—Ռուսաստանի Բաշա քաղաքին մէջ գիւղացոց ապստամբութիւն մը, և Սիպիւրիոյ իրքուցք նա. հանդիս մէջ ալ հրկիւլութիւններ տեղի ունենալը կ'մտնուցանեն:

Պերիին 7.—Վօլքս-Յոյ թունկ թերթը կ'մանուցանէ թէ երկրաց օրձութեան հրաժարեալ պաշտօնեայ Պ. Յարիսին թայ մեծամարտութեան զըրբուեր է Պրիմորք իշխանը:

Պ. Պիթիլէր գանձաց պաշտօնեայ անուանեցաւ:

Վարնա 6.—Պաթէմպէրկի իշխանը այս առաւօտ հոս հասնելով եռանդուն համակրանք ընդունուեցաւ: Իշխանը ժողովրդոց ուղեկալ շայտարարութիւն մը հրատարակեց:

Լոնտրա 7.—Անդգ. կառու. վարութեան կողմէն Սըր Գալանտարի անգղիոյ գնդապետը՝ Աֆրոնիստանի տեղը գեսպան անուանեցաւ:

ԳՐԱՍԱԿԱՆ Այս առումու բացուեցաւ 12.33

Բումէլի	45.75
Բոլթաղրամ	1010.00
Պրիսն	203.00

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ Արեւ.-Բումէլի գաւառին մէջ

Սէրք բաշայի կ'դմանէ ընտրուած տեսչաց խորհրդոյ անդամներէն միայն հեանեալ երկու անձանց բնարութիւնը վաւերացուցեր է Բ. Գուռք. Իրրկօսմ. պաշտօնավար, սրբ են:

Պ. կրույէֆ՝ Հորկց. կրթութեան վերաբերեալ, և Վոլքս. վիչ պէյ՝ Հորկց. շինութեանց վերաբերեալ:

Եզրիպտոսի նորնախը խորհրդին հաստատութեան Յերմոնը այս շարժու Պալատան Ա. քարտուղար Ռիզա պէյի և կամարիչ բարձրատիճան պաշտօնավարի մը ձեռօք Եզրիպտոս պիտի գրուի կըսուի նաև թէ Նամիք բաշա ալ մասնաւորապէս Եզրիպտոս պիտի գրուի Եզրիպտ. պարտուց խնդրոյն քննութեանը համար:

Չիլի կամը երէկ մեծ եպարգոսին հետ և ապա Մպարապետութեան գուռը Չաղի Օսման բաշայի հետ տեսակցութիւններ ունեցաւ:

Երէկ կէս օրին միջոցները Ետի գաւելի բացը հելլենացի նաւ մը՝ յարգ բարձող մովուներոյ մը վրայ իյնալով, թէ մալանան և թէ տանիկ թիւղարներէն մին ընկղմելով կ'կորսուին:

Օտար տէրութիւնը միջնորդ եր են Բ. Գրան որ Սուլթանը բարեհաճի Պաթէմպէրկի իշխանին իր ներկայութեան ընդունելու և այս առթիւ ապահովեր են թէ նա Պերիինի գաշնագրին կատարելապէս համաձայն պիտի ընթանայ:

Վիեննայէն վաղը թի հա. զորքուած Բայթըրի 6 յիս. թիւ մէկ հեռագիրը հեռուեալ անդիկալ թիւները կ'աւայ:

Բեանուրի համազգային յանձնաժողովոյ ձեռօքը առաջաց եղած շինութեանց ծախուցը համար Բ. Գրան կողմէն իրեն փոխ տրուած գումարին իրքը թերհալու վճարք՝ 1 միլիոն ֆրանք տուեր է այս անգամ յանձնաժողովը Բ. Գրան. Արաւրիոյ միջնորդութեամբը: —Արաւրիոյ կառավարութեան քա. տացած մէկ տեղեկագիրը կըսէ թէ, ճումայի վիճակը ուղղակի Բ. Գրան իշխանութեանը յանձնուելու անդ, Ռուսք յիշեալ վիճակը պարպելով պուլիարացի, երկրպագ հօրաց յանձներ են Բոտ յիշեալ անդեկա. գրին, այդ ճումայի վիճակը պուլիար յիշեալ իշխանաց կեդրոնավայրն բլլալով, առկէ շարունակ դինեալ խումբեր կելնեն ու Մակեդոնիոյ կողմերը արշաւելով աւարի ու կրակի կը տան:

Շր. կէս օրին Պուլիարիոյ Պաթէմպէրկի իշխանը մայրաքաղաքս հասնելով, շոգ ենաւը Տօրմապահէի առջը կեցաւ և զինքը զիմառորի գացոյ կոյս Ատենին թարգմանը և գեապանաց Ա. թարգմաններն շոգենաւը երթալով, ասոնց հետ միատեղ ցամաքը ելաւ, որ պալատան կառքերը կոպտէին, իշխանը իր բրուսիական զինուորի շքեղ համազգեստովն ու սա. պաւարտովը, կարճքն այ 5-6 տէրութեանց շրանաներովը

զարդարուած, կառքը նստաւ, որոյ հետևորդացը մէջ պուլիարական գալաքով երկու ալ թիկնապահ կ'անսնուէին, եւ ուղղակի ելալով պալատը երթալով Սուլթանին ներկայացաւ և հաստատութեան ֆերմանը առնելով, գիշերը ժամը 1/2ին ալ Պէօլի քաղաք Ռուսաց գեսպանատունը ընթրելէն յետոյ նորէն շոգ ենաւ նստելով վարնա ուղեւորեցաւ:

Կառավարութիւնը չք. օր նախազգոյց մեծ միջոցներ ձեռք առած էր որպէսզի Պուլիարիոյ Պաթէմպէրկի իշխանը մայրաքաղաքս հասնելուն, Պուլիարաց և Յունաց կողմէն ցոյցեր չըլլան: Ռուսի նոյն տուտուընէ զօրաց խմբակներ կեցնել տրուած էր Վոլքսըրի եւրոպ. և ասիական բոլոր նաւամատոյցները մինչև վեր, և ստիկանք ալ կարգիլէին բաց ի տաճիկներէն միւս ոյ որ նաւակ կամ մակուղ նստել աղէր: Եպենաւ նստողներուն համար սեէ արդիւք մը չկար, մինակ շոգենաւուց ընկերութեանց ընկերութեանց պատեր տրուած էր որ նոյն օրը Պուլիարաց կամ Յունաց վարձու շոգենաւ չտան: Քանի մը պուլիարք թէպէտ օտարազգի դրօշով նստածիք 3-4 փոքր շոգենաւ վարձեր էին, իշխանը դիմաւորելու համար, իսկ ծովային պաշտօնէութեան արգիլուեցան այդ շոգենաւներն մեկնելը: Մինակ նստարանի վրայ շոգենաւով մը Լիման-Օտառի պաշտօնակալ մը և քարանթինայի գլխաւորը Մարմարայի բացը, իշխանին նստած կատանդէն Մեծ Գուքս շոգենաւը դիմաւորելու գացեր էին մարտը անցազիր տալու համար:

Բոլոր ձեռք առնուած բղգու յոթնութեան միջոցներն և զինուորական անսովոր շարժումներն ու տեսքը՝ անհեթեթ զորոյցի մը առիթ տուեցին, որպէս թէ կայս. զեկոյ տեսանին մէկ անգամը Պօլսէս մեկնած բլլալ, որն որ պալատէն իսկ գուրս չէ ելած:

Ռուսիոյ գեապան Լոպանօֆ իշխանը նախ շոգ ենաւ երթալով, Պաթէմպէրկի իշխանն աւար և միատեղ գացեր է կայս. պալատը, զանի Սուլթանին ներկայացնելու:

Պուլիարիոյ իշխանը կ'ըսակէ առաւօտ վարնա հասեր է:

Մահմաւ Նէտիմ բաշա, Սուլթանին թողտուութեամբը թողով Պօլսոյ իւր խօսակը, Պէպէրի իւր ազարանք փախաղեր է իւր բնակութիւնը, որ ամեն օր անթիւ բարեկամներ էրեն այցելութեան երթալուն կ'չարունակեն:

Այս կիրակի ցերեկին օգոյն Չերմուլիւնը այնքան սաստկութեան հասեր էր, որ Չերմաշայի (սանդիլիատ) բաց օդին 53 աստիճան իսկ շուքի տակ 32 աստիճանը բարձրացեր էր: Սակայն անկէ ի վեր մինչև ցայսօր Չերմուլիւնը երթալով բարեկառնուելու վրայ է:

Այս կիրակի ցերեկին օգոյն Չերմուլիւնը այնքան սաստկութեան հասեր էր, որ Չերմաշայի (սանդիլիատ) բաց օդին 53 աստիճան իսկ շուքի տակ 32 աստիճանը բարձրացեր էր: Սակայն անկէ ի վեր մինչև ցայսօր Չերմուլիւնը երթալով բարեկառնուելու վրայ է:

—Այլ քո բաշա պատգամա-
ւորութիւն մը զրկելով թրնօվա
Պուկարիոյ իշխանին շնորհաւոր-
ութեան երթալու մասին եղած
զրոյցներն պաշտօնապէս հեր-
քեր է :

—Պուկարիոյ աղբ. ժողովը
(Ն. Տ.) յս. 12ին գումարուելով,
Պաթէմպէրկի իշխանին երգման
արարողութիւնը կատարելէն
յետոյ, ժողովը լուծուելով,
հկտ. 15ին նոր ընտրութիւններ
պիտի ըլլան :

—Վագրթ անցեալ տարի
հեռաւոր գաւառի մը կուսա-
կալին գէտ ծանր ամբաստանու-
թիւններ պարունակող նամակ
մը հրատարակած ըլլալով, հոս
իրեն գէտ բացուած դատին մէջ
չկրնալով հաստատել իւր գրած-
ներն, տնօրէնը Ֆիլիք էֆ. այս
անգամ դատարանէն 3 ամիս
բանտարկութեան դատապար-
տուեր է, իսկ ինքը վճիռք
չընդունելով՝ վերաքննութեան
դիմեր է :

—Լոնտրայէն վագրթի հա-
ղորդուած ուրիշ մէկ հեռագիր
մ'ալ կըսէ թէ, ստուգուած է
որ 1873ին, վախճանեալ Ապտ-
իւլ-Աղիզ կայսեր կողմէն նախ-
կին խտրիլին շնորհուած ֆէր-
մանին այժմ ջնջուելուն վրայօք,
Գաղղիա և Անգղիա իրենց Պոլ-
սոյ դեսպանաց ձեռօքը ունե-
րողք մը չեն բրած: Մինակ այս
մասին մէծ տէրութեանց և Բ.
Դրան միջև կարծեաց փոխանա-
կութիւն մը տեղի ունենալով,
տրուած բացատրութիւններէն
սա հասկցուած է թէ, Գաղղիա
և Անգղիա առ այժմ դիտաւո-
րութիւն չունին այդ խնդիրն
յուզել :

—Հացին գինը երէկուցնէ
նորէն 10 փր. վրայ դնելով,
100 և 110 փր. ծախել որոշ-
ուեցաւ :

—Ֆար կըսէ թէ Բ. Դուռը
վերջապէս հաւաներ է Եանեան
Յունաստանի թողուլ :

—Կլօպի քաջուած հեռա-
գիր մը կըսէ թէ՝ իկնաթիէվ
զօրապետը նորէն պաշտօնի վը-
րայ պիտի անցնի Ռուսիոյ ներ-
քին գործոց նախարարութեանը
մէջ :

—Անգղիոյ, Գաղղիոյ և Ի-
տալիոյ դեսպանք եշ. օր բա-
ցատրութիւն պահանջեր են Բ.
Դրնէն, թունուղն ու Տրապու-
սը միացնելու մասին խորհրտ-
տին բաշա բացորոշապէս ժըխ-
տեր է թէ Դուռը այդպիսի դի-
տաւորութիւն մը չունի, Դես-
պանք ալ նոյնը հեռագրեր են
իրենց կ'աւարտութեանը :

—Դանուբի վրայ կենալու
համար Ռուսիա ջնծայ իրեր է
Պուկարիոյ 2 շոգենաւ, 6 թըն-
դանօթակիր մակոյկ մէկ մէկ
ֆրուրի թնդանօթով և 6 մա-
կոյկ շթածիք (թօրթի), որոց
ամենուն ալ նաւաստիներն ուս-
են եղեր :

—Լեանթ թուրքիոյ մէջ
Ցաճկաց և ֆրիստոնէից իրա-
ւանց հաւասարութեան բաղ-
դատական օրինակ մ'ըլլալու
համար, կառավարական շրջա-
նակաց մէջ իսլամ և ոչ իսլամ
պաշտօնավարաց հետեւեալ թը-
ուահամարը կընէ: —38 Երբա.

կուտի անդամոց 27ը տաճիկ են,
7ը յոյն, 2ը հայ և 2ը հրեայ:—
Պետ. Խորհրդոյ անդամոց 44ը
տաճիկ է, 4 հայ, 2 յոյն և 1
հրեայ:—Արտք. գործոց նախա-
րարութեան մէջ բոլոր բարձ-
րաստիճան պաշտօնավարք տա-
ճիկ են, բաց ի 11 հոգիէ, որոց
8ը հայ և 3ը յոյն են:—Արդր-
գործոց մէջ 120 տաճիկ անդամ
կայ այլ այլ դատարաններն, ո-
րոց մէջ 26 հայ և 9 յոյն կայ,
իսկ բոլոր ստորակարգեալ գոր-
ծակալք տաճիկ են:—Հարկց. շի-
նութեանց պաշտօնէութեան
բարձրագոյն 2 հայ կայ և մէկ
յոյն, բոլոր միւսներն՝ բաց ի մէ-
կէն որ գաղղիացի է, տաճիկ
են:—Գանձուց պաշտօնատան մէջ
ոչ յոյն կայ և ոչ հայ:—Մաք-
սատան ժողովոյն մէջ կայ 9 տա-
ճիկ, 2 հայ և բնաւ յոյն:—Հա-
սարկ. կրթ. ժողովոյ մէջ կայ 4
տաճիկ, 1 հայ և 1 յոյն:—Թի-
ճարէթի պաշտ. ժողովոյ մէջ
կայ 5 հայ և 3 տաճիկ, իսկ
այլևայլ ճիւղերուն մէջ կան 14
տաճիկ 8 հայ և բնաւ յոյն:—
Հեռագրաց եւ թղթատարու-
թեանց ժողովոյ մէջ կան 18
տաճիկ 3 հայ 2 հայէպցի և 2
յոյն:—Պատերազմական գործոց
պաշտօնարանը կան 24 տաճիկ,
4 յոյն, 4 հայ և մէկ լեհացի:
—Ծովային գործոց պաշտօնա-
տան մէջ 135 տաճիկ, 4 հայ,
1 յոյն և 1 ասորի:—Թնդանօ.
թարանի բարձրաստիճան պաշ-
տօնավարաց մէջ, որք 136 տա-
ճիկ են, չկայ ոչ հայ և ոչ յոյն
մը:—Ստիւդիանութեան պաշտօ-
նարանը կայ 110 տաճիկ, 4 յոյն,
4 հայ և 2 լատին:—Հանքաց
և անտառաց վերատեսչութեան
մէջ կան 15 տաճիկ, 6 հայ և
1 յոյն:—Քաղաքապետութեան
մէջ կան 74 տաճիկ, 10 հայ, 4
լատին, 9 յոյն և 1 ասորի:

Պաշտօններու բաշխման նոյն
անհաւասարութիւնը բաւական
է ցոյց տալ թէ քաղաքացիու-
թեան իրաւանց հաւասարու-
թիւնը դեռ ինչ վիճակի մէջ է:

Իւսկիւտար 23 յնս. 79

Յաւօք սրտի յայտարարելով
թէ, Շահէն ստորագրութեամբ
յօդուածագիր մը, կերելի թէ
թիւր համոզմամբ և առանց
ճշմարտութեան վերահասու լի-
նելու, յասպօրէզ ելեր է ընդ-
դէմ մեր և ի պաշտպանութիւն
Յ. Վարդուղեանի, կանցնիմբուն
խնդիրն երկտողիւ մը բացատ-
րել:

Ամեն ոք գիտէ թէ, երբ
դերասանապետ մը իւր պատաս-
խանատուութեանը ապկ յայ-
տարարութիւն մը կընէ և անոր
ներքեւ ալ խել մը համոզիչ
և հրապուրիչ խօսքեր և յա-
ճախորդները գոհացնելու շը-
ռայլ խոստումներ կ'ցնտեղէ,
որպէս զի ժողովուրդը թատե-
րասէր լինի, դերասանութիւնը
քաջալերուի և յառաջ երթայ
իւր հրապարակական դաստիա-
րակութեանը պաշտօնին մէջ,
այսու ամենայնիւ պարտաւո-
րութիւն կուենայ իւր բրած
յայտարարութեանը մէջ ինչ որ
գրած է, անպակաս գործադը-

րել նոյնպէս յաճախորդք ալ
իրաւունք կուենան զայն ամ:
բողջապէս պահանջել, որ ասի
երաշխաւորեալ սակարկութիւն
մի կըլլայ թատրոնի պաշտօնա-
կան յայտարարութեամբն ու
յաճախորդաց ըստայնմ վճարած
դրամին, ճիշդ օրնպէս՝ ինչպէս
որ մէկը մէկ քաշ՝ այն է 400
տրամ տանձը 10 դրչի տալու
սակարկելէն և 10 դրչն առնե-
լէն ետև չկրնար 300 տրամ
տալ, և երբ պակաս տուած ա-
տեն դրամն վճարողը իրաւամբ
պահանջէ թէ՛ ո՛ւր է 100 տրա-
մը, չկրնար ըսել թէ պարտից
պանին հարցուր, կամ գնա՛ ծա-
ռերուն վրայ բնտուէ ալ ինք
պարտաւոր է կամ պակասը տալ
և կամ պակասին պատկանած
դրամն ետ տալ, զի ասի չընելը
խաբէութիւն է:

Այսպէս էր Յ. Վարդուղեանի
տուած մէկ ներկայացման տե-
սարանը, որ դերասանութեան
մէջ պատիւ չբերող դերասա-
նութիւն մտեր, վասնզի Յ. Վար-
դուղեանի ջրած յայտարարու-
թեան Դ. արարուածին մէջ զչա-
րագործաց պատիժը գրուած է
զոր մենք կսպասէինք տեսնել,
և երբ սկիզբէն ցկերջ Արշակէն
զատ չարագործ մը չուեսանք և
չարագործ Արշակն ալ պատիժ
չկրեց, հոն իրաւամբ հարցու-
ցինք թէ ինչ եղաւ Արշակն,
Վարդուղեան ելաւ ի թատերա-
բեմն և առանց իւր պակասու-
թիւնը թեթեւցնելու և մեր նե-
րողամտութիւնը գոնէ ինդրե-
լու՝ «պատմութեան դիմէ» ը-
սաւ և ասով որպէս թէ բոս
յայտարարութեան իր պարտքը
կատարած եղաւ:

Յ. Վարդուղեան էֆէնտի
Պատմութեան մէջ Արշակայ
պատիժը կուզէ ըլլայ, կուզէ
չըլլայ, բաւական է որ դու չչա-
րագործաց պատիժը ըսած էիր
և մենք զայն տեսնելու եկած
էինք և ոչ թէ ներկայացումը
բնագրին հետ բաղդատելու
պաշտօնով, եթէ այդ կերպով
ըսել կուզէիր թէ, պատմու-
թեան մէջ Արշակայ պատիժ չը
կայ, թող չչարագործաց պա-
տիժը ըսելով յայտարարութիւն
չընէիր, զի չեղած բան մը յայ-
տարարելը խաբելու սկզբուն.
քով կըլլայ, իսկ եթէ պատմու-
թեան մէջ կար և յայտարարե-
ցիր, դարձեալ կ'հարցնեմ՝ ո՛ր
է չարագործին պատիժը, զի ե-
ղած բան մը յայտարարելն ու
չընելն ալ խաբէութիւն է, այս
եղելութենէն բարեկամաբար
հետեւանք մը հանելով կ'խրա-
տեմ զքեզ, որ ժողովրդեան առ-
ջն բրած հրապարակական խոս-
տումը այսուհետև ջանա՛ որ
ամբողջապէս կատարես, որպէս
զի ժողովուրդը թատերասէր
ըլլայ և թատրոնը յառաջագի-
մէ. այս է քու պարտաւորու-
թիւնը և այս է ժողովրդեան
իրաւացը պահանջը. դուք որ
իրաւալուհ մէկը կերելիք, կը
յուսամ որ դո՛հ պիտի ըլլաք իմ
ձեզ տուած այս հրապարակա-
կան և թատրոնի յառաջդիմու-
թեան նախանձախնդիր դասէս,
և անկեղծօրէն շնորհակալ պի-
տիլ ինիք ինձ: Որով մնամ
Մ. Ն.



ԱՂԴ
Կ'ձանուցանեմք Արգոյ հա-
տարակութեան որ վերոյ նշա-
նակեալ նշանները բոլոր Տաճ-
կաստանի համար ինձ առանձ-
նաշնորհեալ ըլլալով, թուակա-
նէս մինչև 15 օր վերջը սոյն նը-
շանով կարժարներ բերողին և
վաճառողին դէմ, ըստ տրա-
մագրութեան օրինաց՝ պիտի
բողքեմ:

Մ. Մանուկ
Շէրիֆ-Բաշախան թիւ 6
13/25 յունիս 1879

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ
Մ Ա Ր Մ Ն Ա Մ Ա Ր Ջ Ո Ի Թ Ի Դ
Պ Ա Տ Ա Բ Ա Ջ Ա Ր Գ

Հ ր ր ր ր ր ր ր
Ն Շ Ա Ն Կ. Պ Ե Ի Պ Ե Ի Բ Ա Ն

Սոյն կարևոր և օգտակար զըր-
քոյկը, որ թէ՛ ի պէտս վարժարանաց
և թէ՛ առանձինն ուսանողաց կրնայ
միանգամայն ծաւայել, յստակ բա-
ցատրութեամբ, 150 փայտատիպ
պատկերօք ճոխացաւ և 120 երեսէ
բաղկացեալ ընտիր դասագիրք մէտ,
զինն է կէս արծաթ մետր, (գաղղ.
բնագրին գինն ըլլալով 5 ու կէս ֆր.)
կ'գտնուի Կ. Պոլիս Սուլթան-
Համամ Էսպատ էֆ խան թիւ 17,
Նշան էֆ. և Պերպէրեանի փորագ.
բատուը և բոլոր գրավաճառաց ըմփ

Հարսթիւս	ԲՇ. 25 Յունիս
ԸՆԻՃ. ՊԱՐՏ. ՍՐԺ.	
Բաց	12.33
Յած գին	12.33
Բարձր գին	12.35
Գոց	12.33
Թղթագրամ Բաց	1050 00
ցած	975 00
բարձր	1050 00
ժամը	11 1000.00
Պոլս. 63ի	Փր. 000 00
» 65ի	» 071.00
» 69ի	» 069 00
» 73ի	» 064 50
Գանձատուս	21.25
Սօսիթթէ Ժէնէրալ	4.04
Սօսիթթէ Օթօման	3 18
Պանք տը Բօնսթ.	6.25
Քրէտի Ժէնէրալ	4 15
Թրամիլէյ	2 35
Բուս. կրկաթուղի	45 75
ԸՆԹՈՒՆԳՔ ԴՐԱՄՈՑ	
(Ուս. արհ. 100 մե. 1 Կ-ու.)	
Անգղ. ոսկի	109.16
Գաղղ.	87.28
Բօլ	89.38
Քարպօն արծաթ	17.02
» թղթագրամ	10.00
Քըլմից	81.15
Հինգնոց	14 20
Սէթուիք	15 10
ձերմակ մէճիտ	06 08
Պղինձ	203 00